

Լիլիթ Սուփասյան

ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քանալի բառեր. ընտրական իրավունք, քվեարկել, ընտրել, ընտրվել, բանտարկյալ, սահմանափակումներ, քրեական օրենսգիրք, սահմանադրություն:

Հայտնի իրողություն է, որ ցանկացած ժողովրդավարական պետության մեջ իշխանությունն ի վերուստ պատկանում է ժողովրդին: Միաժամանակ, ամենատարբեր հանգամանքների հաշվառմամբ տարբեր երկրներում ժողովուրդի՝ իշխանության իրականացմանն ունեցած մասնակցությունը տարբեր է լինում: Օրինակ, ժամանակակից ժողովրդավարական երկրներում (Իտալիա, Իսպանիա), այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում (2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ) բացի ընտրական իրավունքը, ամրագրված է նաև ժողովրդական նախաձեռնության իրավունքը: Այս համատեքստում չի կարելի պնդել, որ Հայաստանի խորհրդային հանրապետությունն աչքի էր ընկնում ժողովրդավարության բարձր մակարդակով, այդուհանդերձ մեր երկրի պատմության այդ ժամանակահատվածի փորձը ուսանելի կարող է լինել ժամանակակից ժողովրդավարական ինստիտուտների կերտման հարցում:

ՀՍԽՀ առաջին սահմանադրությունն ընդունվել է 1922 թվականի փետրվարի 3-ին, ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների, կարմիր բանակայիների, դեպուտատների սովետների 1-ին համագումարում, որի հիմքում ընկած էին ՌՍՖՍՀ սահմանադրության (1918) սկզբունքները: Այս Սահմանադրության Երրորդ բաժինն իր ութերորդ գլխում ամրագրում է քաղաքացիների ընտրական իրավունքը: Մասնավորապես՝ բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորական խորհուրդների համար ընտրելու և ընտրվելու իրավունքով անկախ ազգությունից, դավանանքից, նստակեցությունից հավասարապես օժտված էին երկու սեռի մինչև ընտրության օրը 18 տարին լրացած հետևյալ քաղաքացիները՝

ա. արտադրող և հանրօգուտ աշխատանքով ապրուստի միջոցներ ձեռք բերող բոլոր անձինք, ինչպես նաև նրանք, որոնք տնային տնտեսությամբ առաջինների համար աշխատանքի հնարավորություն էին ընձեռում

բ. Կարմիր զինվորները

գ. վերը նշված կատեգորիայի աշխատունակությունը կորցրած անձինք¹:

Սահմանադրությունը, սպառիչ թվարկելով ընտրական իրավունքի սուբյեկտների շրջանակը, միաժամանակ հաջորդ հոդվածով նախատեսում էր այն անձանց շրջանակը, որոնք զրկված են ընտրելու և ընտրվելու իրավունքից : Մասնավորապես, այդ անձանց թվին էին դասվում՝

ա. Վարձու աշխատանքը շահագործողները,

բ. Անաշխատ եկամուտով ապրողները,

գ. Մասնավոր առևտրականները և առևտրային միջնորդները,

դ. Կրոնավորներն ու կրոնական պաշտամունքի հոգևոր սպասավորները,

ե. Տապալված կառավարությունների անդամները և քաղաքական հետախուզության ու ոստիկանության պատասխանատու պաշտոնյաները, խմբապետներն ու մաուզերիստները,

զ. Սահմանաված կարգով թուլամիտ և խելակորույս ճանաչվածները, ինչպես և խնամակալության ենթակա անձինք

է. Օրենքով կամ դատավճռով իրավազրկման դատապարտվածները:

Առավել ուշագրավ է ՀՍԽՀ Սահմանադրության 71 հոդվածի վերջին կետը, որը վերաբերում է օրենքով կամ դատավճռով իրավազրկմանը: Այդ առնչությամբ ՀՍԽՀ

¹ Հ.Ս.Խ.Հ. Սահմանադրություն, 1922 թ.: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 21, հոդված 70:

1922 թ. Քրեական օրենսգիրքը «Պատիժների ու սոցիալական պաշտպանության այլ միջոցների կարգերն ու տեսակները» վերտառությամբ 4-րդ գլխում քրեական պատիժների ցանկում նախատեսում է նաև իրավունքի սահմանափակումը¹: Միաժամանակ նշված իրավական ակտի 40-րդ հոդվածով իրավունքի սահմանափակումը մեկնաբանում է որպես իրավունքից զրկում ոչ ավելի քան մեկ տարի ժամանակով: Մասնավորապես 1922 թ. քրեական օրենսգրքով սահմանափակվում էին՝

ա. Ընտրելու և ընտրվելու իրավունքը (Սահմանադրության 70 և 71 հոդ.)

բ. Ընտրելու և ընրվելու իրավունքը՝ արհեստակցական ու այլ կազմակերպություններում:

գ. Պատասխանատու պաշտոն վարելու, նմանապես ժողովրդական դատարանի ատենակալ լինելու, երաշխավոր և խնամակալ լինելու իրավունքը:

Ի դեպ, հետաքրքիր է, որ այս նույն հոդվածը սահմանում էր, որ ազատագրված դատապարտվածների համար իրավունքի սահմանափակման ժամանակը սկսվում է պատիժը կրելը վերջացնելուց կամ պատժից պայմանական ազատություն ստանալու օրից, այսինքն՝ դատվածության ընթացքում: Միաժամանակ, Իրավունքի սահմանափակումը նշանակվում էր, որ որպես լրացուցիչ պատիժ, եթե քրեական օրենսգրքով նախատեսված հանցանք կատարած անձը արատավորված էր ճանաչվում, ապա ազատագրված դատապարտելիս դատարանը պարտավոր էր իրավունքի սահմանափակման խնդիր հարուցել, եթե քրեական օրենսգրքով այդ արարքի համար սահմանվում էր մեկ կամ ավելի տարի ժամանակով ազատագրվում²:

Այս շրջանում ընտրական իրավունքից զրկված քաղաքացիներին տարբեր մակարդակի իրավական ակտերում բնութագրվում էին որպես «ծայնագուրկ»: Այսպես օրինակ՝ 1927 թ. դատավճիռներից մեկում հանդիպում ենք հետևյալ ձևակերպմանը. «Սուրեն Գաբրիելի Համբարձումյան, 38 տարեկան, ամուսնացած, կիսագրագետ, անկուսակցական, ունևոր, չդատված, ծայնագուրկ»³:

Եվս մեկ օրինակ հանդիպում է արդեն Հայ կենտրոնական կից ապակուլակացման և ընտրական իրավունքից զրկված անձանց դիմումները քննող 1930 թ. օգոստոսի 7-ի նիստի արձանագրությունից. «Ղամարլույի շրջան, Հարություն Բաղայան՝ ծայնագուրկ է 1926 թվից (կուլակ), ունեցել է օղու գործարան, բանեցրել 90 բանվոր»⁴:

Ինչպես տեսնում ենք, վերը բերված օրինակում ընտրական իրավունքի սահմանափակման հիմք էր հանդիսանում վարձու աշխատանքը օգտագործել/շահագործելը: Ընտրական իրավունքից զրկված անձանց ցուցակներ կազմվում էին բոլոր մարզերում, որտեղ նշվում էր քաղաքացու անունը, ազգանունը, տարիքը, թե ինչով է զբաղվել մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը, ինչով է զբաղվել «դաշնակների կառավարության» օրոք, ինչով է զբաղվում այժմ, դատվել է արդյոք և ինչ հանցանքի համար, իսկ վերջինս այունակում գրվում էր ընտրական իրավունքից զրկելու պատճառը, օրինակ՝ «անվստահելի», «շահագործող», «մարդասպան» և այլն⁵:

Ընտրական իրավունքից զրկված քաղաքացիներից շատերը դիմումներ էին ներկայացնում ընտրական հանձնաժողովներ, որպեսզի վերականգնեին իրենց այդ իրավունքը: Այսպես՝ Ալեքսանդրապոլի ընտրական հանձնաժողովի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրված զեկույցում նշվում է, որ շրջանի ընդհանուր թվով 1496 ընտրական իրավունք չունեցող անձանցից 70 դիմում-բողոքներ են ստացվել (հիմնականում կուլակներից և նախկին խմբապետներից), և բավարարվել են 13-ը, մերժվել 57-ը⁶:

Առավել ուշագրավ է այդ դիմումներից մեկը. «Թևան Շահբազյան.1925-ից Ղանթարի տակ ունեցել են հացի առևտուր, որից հետո թողել են այդ զբաղմունքը, սակայն մինչև այժմ հաշվում են ծայնագուրկ: Խնդրում են վերականգնել իմ ընտրական իրա-

¹ Հ.Ս.Խ.Հ. Քրեական օրենսգիրք, 1922 թ., հոդված 32, կետ Ը:

² Տե՛ս նույն տեղում, հոդված 42:

³ ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 393:

⁴ Նույն տեղում, գործ 509:

⁵ Նույն տեղում, գործ 51, Մեղրու շրջանի ընտրական հանձնաժողով 22.11.1922 թ.:

⁶ Նույն տեղում:

վունքը»: Բացի այդ, դիմումին կցված են եղել նամակներ 6 տարբեր գործատուներից, որոնք հավաստում էին քաղաքացու բանվոր աշխատելը¹:

Կարծում ենք, ընտրական իրավունք ունեցողների խիստ նեղ շրջանակը պատմության այս ժամանակահատվածում իր քաղաքական պատճառներն ուներ: Խնդիրն այն է, որ նորաստեղծ սոցիալիստական այս հասարակարգը չէր կարող թույլ տալ «անկայուն» տարրերին ընտրական իրավունքի իրացմամբ խարխլելու առանց այդ էլ տնտեսական ձգնաժամի տակ ձկված իր հիմքերը: Այս առիթով Վ.Ի.Լենինը գրում է. «...պատմական անհրաժեշտությունների անհարկի ընդհանրացումներից խուսափելու համար նշեմ, որ ընտրական իրավունքից զրկումը չի վերաբերում Սովետական պետությանը, ինչպես բուրժուա-դեմոկրատական երկրների մեծամասնությունում, ուր որոշակի խումբ քաղաքացիներ ցմահ զրկված են այդ իրավունքից, այլ վերաբերում է միայն շահագործողներին, միայն նրանց, ովքեր ի հեճուկս սովետական սոցիալիստական պետության հիմնական օրենքների, պնդում են իրենց շահագործական դիրքը, որպեսզի պահպանեն կապիտալիստական հարաբերությունները: Հետևաբար նրանց թվի կրճատմամբ մի կողմից և սոցիալիզմի ամրապնդմամբ մյուս կողմից, աստիճանաբար կկրճատվի նաև ընտրական իրավունք չունեցողների թիվը²»:

1937 թ. մարտի 23-ին ՀԽՍՀ սովետների 9-րդ արտակարգ համագումարում ընդունվեց նոր սահմանադրություն, որի հիմքում ընկած էին ԽՍՀՄ 1936 թվականի Սահմանադրության սկզբունքները: Այս Սահմանադրության 135 հոդվածով դեպուտատների ընտրության համար հռչակվում էր ընդհանրության սկզբունքը, այսինքն ՀՍՍՌ 18 տարին լրացած բոլոր քաղաքացիները, անկախ ռասսայական ու ազգային պատականությունից, սեռից, դավանանքից, կրթական ցեղից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեին մասնակցելու դեպուտատների ընտրություններին, բացառությամբ օրենքով սահմանված կարգով խելագար ճանաչված անձերի և այն անձերի, որոնք դատարանի կողմից դատապարտված են ընտրական իրավունքի զրկումով:

Երբ ուսումնասիրում ենք ՀԽՍՀ ընտրողների կազմի հաշվառման տախտակները, պարզ է դառնում, որ ընտրական իրավունքից զրկված վերը նշված երկու խումբ անձանց՝ օրենքով սահմանված կարգով խելագար ճանաչվածների և դատարանի կողմից ընտրական իրավունքի զրկումով դատապարտվածների թիվը գրեթե հավասար էին: Այսպես՝

Ընտրողների կազմի հաշվառման տախտակ (Առ 24 դեկտեմբերի 1939թ³)

Շրջան	Ընտրական իրավունքից զրկված են դատարանի որոշմամբ	Ընտրական իրավունքից զրկված են որպես խելագարներ
Ալագյազի	6	7
Ախտայի	9	12
Սպանդարյանի	27	19
Կալինինոյի	16	13

ՀՍՍՌ Քրեական օրենսգիրքը Հանցագործություն կատարած անձանց նկատմամբ կիրառվող «սոցիալական պաշտպանության միջոցները» վերտառությամբ չորրորդ բաժնում անդրադառնում է նաև իրավունքների սահմանափակմանը⁴: Հետագայում այս կետն արդեն հստակեցվում է: Այսպես, իրավունքի սահմանափակում նշանակում է՝ ա. ակտիվ և պասիվ ընտրական իրավունքներից, բ. հասարակական կազմակերպություններում ընտրովի պաշտոն վարելու իրավունքից, գ. պետական այս կամ այն պաշտոն վարելու իրավունքից, դ. պատվավոր կոչում ունենալու իրավունքից, ե. ծնողական իրավունքներից, զ. պետական ապահովության և սոցիալական ապահովագրության

¹ Նույն տեղում, գ. 393:

² Ленин В.И. Полн. собр. соч., Издательство политической литературы, М., 1969, т. 38, с. 109.

³ ՀԱՍ, ֆ. 207, ց. 1, գ. 181:

⁴ Հայկական ՍՍՌ Քրեական օրենսգիրք, ընդունված ՀՍՍՌ Կենտրոնական և Ժողովուրդների 1927 թ. Նոյեմբերի 1, լրացումներով և փոփոխություններով առ մեկը հուլիսի 1951, հոդված 20, կետ Ե:

կարգով կենսաթոշակ ստանալու և գործազրկության դեպքերում սոցիալական ապահովագրության կարգով նպաստ ստանալու իրավունքներից զրկումը¹:

Պետք է նշել նաև, որ ի տարբերություն 1922 թ. Հ.Ս.Խ.Հ. Քրեական օրենսգրքի, իրավունքների սահմանափակում կարող էր կիրառվել ոչ ավելի քան հինգ տարի ժամանակով: Իսկ այն դեպքում, երբ իրավունքների սահմանափակումը նշանակվում էր որպես պատժի լրացուցիչ միջոց ազատագրված հետ միասին, իրավունքների սահմանափակումը տարածվում էր կալանքի ամբողջ տևողության և բացի դրանից դատավճռով սահմանված ժամանակաշրջանի վրա²: Ի դեպ, իրավունքներից զրկելու հարցը ամեն անգամ մեկ տարուց ավելի ժամանակով ազատագրված դատավճիռ կայացնելիս դատարանը պարտավոր էր քննության առնել: Իսկ պատժի ավելի մեղմ միջոց նշանակելիս իրավունքներից զրկելը չէր թույլատրվում³:

Ելնելով 1937 թ. Սահմանադրությունից՝ ՀՍՄՌ Գերագույն Սովետի ընտրությունների կանոնադրության (2րդ հոդված), ՀՍՄՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային սովետների ընտրությունների կանոնադրության (2րդ հոդված), ՀՍՄՌ ժողովրդական դատարանների ընտրությունների կանոնադրության (8րդ հոդված) մեջ համապատասխանաբար նշվում էր դատարանի կողմից ընտրական իրավունքից զրկված անձանց՝ ընտրական ցուցակներում ներառելու անթույլատրելիությունը:

Հետագայում՝ 1958թ դեկտեմբերի 25-ին, ՍՍՌՄ Գերագույն Սովետն ընդունեց «Պատարանով ընտրական իրավունքից զրկելը վերացնելու մասին» օրենքը, ի կատարումն որի ՀՍՄՌ Գերագույն Սովետը համապատասխան փոփոխություններ մտցրեց վերը նշված նորմատիվ իրավական ակտերում՝ ընտրական իրավունք շնորհելով 18 տարին լրացած բոլոր քաղաքացիներին, բացառությամբ այն անձերի, որոնք օրենքով սահմանված կարգով խելագար են ճանաչված⁴:

Օրինաչափ է, որ 1961 մարտի 7-ին ընդունված ՀՍՄՀ նոր Քրեական օրենսգրքում «Պատժի տեսակները» վերտառությամբ 21 հոդվածում իրավունքների սահմանափակում/զրկումների շարքում բացակայում էր ընտրական իրավունքից զրկելը: Նախորդ Քրեական օրենսգրքի իրավունքների սահմանափակումներից, որոշակի փոփոխություններով, որպես քրեական պատժի տեսակ մնացել էին միայն որոշակի պաշտոններ վարելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, զինվորական կամ հատուկ կոչումից և ծնողական իրավունքից զրկումը (վերջին 2-ը՝ լրացուցիչ):

Այսպիսով ձևական առումով ազատագրված անձինք ստացան ընտրություններին մասնակցելու իրավունք, թեպետ իրականում նրանք այդպես էլ չէին քվեարկում: Կարծում ենք, որ դրան խոչընդոտում էր քաղաքական կամքի բացակայությունը, և ոչ թե ազատագրված անձանց ֆիզիկական մեկուսացվածությունը: Այսպես՝ 1979 մարտի 4 ԽՍՀՄ 10-երորդ գումարման Գերագույն Սովետի ընտրությունների նախապատրաստման ընթացքի մասին Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի նախագահ Շաբաևը գրում է, որ Հյուսիսային բևեռում 22, իսկ Անտարկտիդայում 3 ընտրական տեղամաս է ստեղծվել⁵:

Առանձին ընտրական տեղամասեր էին կազմվում առնվազն 25 ընտրող ունեցող այն նավերում, որոնք ընտրությունների օրը գտնվում էին նավարկության մեջ⁶: Ընտրական տեղամասեր էին կազմվում նաև հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին, հաշմանդամների տներին կից⁷: Ընտրելու հնարավորություն էր ստեղծվում նաև այն քաղաքացիների համար, ովքեր բացակայելու էին իրենց գրանցման վայրից ընտրությունների անցկացման օրը: Այսպես՝ եթե ընտրողների ցուցակի հրապարակ-

¹ Նույն տեղում, հոդված 31:

² Նույն տեղում, հոդված 32:

³ Նույն տեղում, հոդված 34:

⁴ ՀԱԱ, ֆ. 207, ց. 2, գ. 145:

⁵ Նույն տեղում, ց. 36, գ. 9:

⁶ ՍՍՀՄ ԳՍ ընտրությունների կանոնադրություն, Ե., 1974, հոդված 33:

⁷ Նույն տեղում, հոդված 34:

ման և ընտրությունների օրվա միջև ընկած ժամանակամիջոցում ընտրողը փոխեր իր բնակավայրը, աշխատավորների դեպուտատների համապատասխան սովետի գործադիր կոմիտեն նրան տալիս էր ՍՍՀՄ ԳՍ-ի նախագահության սահմանած ձևով «Քվեարկության իրավունքի վկայական» և ընտրողների ցուցակում նշում՝ «մեկնեց»¹: Այս վկայականներն օգտագործվում էին նաև հեռընթաց մարդատար գնացքներում (հ. 35) և զորամասերում ու զորային միավորումներում (հ. 20):

ԽՍՀՄ ողջ տարածքում ազատագրկման դատապարտված անձանց թիվը բավական մեծ էր՝ 1936-1991 թթ. տարեկան միջինը 1.881.570 քաղաքացի (1948-1953 թթ. մոտ 2.500.000²), այնինչ քրեակատարողական հիմնարկներին կից ընտրական տեղամասեր ստեղծելու կամ ազատագրկված անձանց «Քվեարկության իրավունքի վկայական» տալու ոչ մի նշում չենք հանդիպում ԽՍՀՄ/ՀԽՍՀ ընտրությունների անցկացման կարգը սահմանող կանոնադրություններում: Փաստորեն պատկառելի թվով քաղաքացիներ գրկված էին իշխանության ձևավորմանը մասնակցելու իրավունքից:

Ընտրական իրավունքի վերաբերությամբ ոչինչ չփոխվեց նաև 1978 թ. ապրիլի 14-ի ՀԽՍՀ 9-րդ գումարման Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված սահմանադրությամբ:

Խորհրդային Հայաստանի ընտրական իրավունքի իրացման փորձը առավել խորությամբ կուսուննասիրվի մեր հետագա հետազոտություններում և մեթոդաբանական առումով կարող է օգտակար լինել մեր գործող ընտրական օրենսդրության կատարելագործման համար:

Лилит Сукиасян, Проблемы ограничения избирательного права в политико-правовых реалиях Армении советского периода. В статье говорится о концепции ограничения избирательного права в армянской политико-правовой действительности советского периода. Обсуждается активное избирательное право (право голосовать), его ограничения как мера наказания предусмотренная Криминальным кодексом Армянской ССР и последующая отмена этой меры. Автор поднимает эти правовые вопросы в исторической перспективе.

Ключевые слова: избирательное, право, голосовать, избирать, избираться, заключенный, ограничения, криминальный кодекс, Конституция.

Lilit Sukiasyan, The problems of restrictions on the right to vote/disenfranchisement in Armenian SSR. The article touches upon the right to vote in the Armenian legal-political reality of the Soviet period. The active voting right (the right to elect) is discussed within the framework of this article shedding light on the disenfranchisement as a type of punishment set by the Criminal code of Armenian SSR and the further formal reversal of this punishment. The author has conferred to these issues and interpreted them in historical perspective.

Key words: right to vote, restriction, disenfranchisement, convicted, limitation, criminal code, Constitution.

¹ ՍՍՀՄ Գերագույն Սովետի ընտրությունների Կանոնադրություն, Երևան 1974, հոդված 20:

² <http://magazines.russ.ru/oz/2003/2/gilin-pr.html>, Яков Гилинский, «Отечественные записки» 2003, №2: